ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Պատվիրատուն՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/35» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի օգոստոսի 7-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-7/35-1 պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2018 թվականի հոկտեմբերի 30-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն՝** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություններ՝ ըստ սույն հայտարարությանը կից № 1 և № 2 Հավելվածների:

**Փոփոխության հիմնավորում՝** Սույն փոփոխությունը կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.6 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ: Պայմանագրով կողմերի փոխադարձ պարտավորությունները դեռ չեն ավարտվել:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության առաջատար մասնագետ Գ. Գևորգյանին:

**Հեռախոս՝ 010-29-44-18**
**Էլ.փոստ՝ g.gevorgyan@mil.am:**
**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

**Հավելված N 1**
**№ ԳՀԱՊՁԲ-7/35-1 գնման պայմանագրի**
**№ 1 Փոփոխության**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքների պրանքի անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը 2018թ.-ին ըստ եռամսյակների, ընդ որում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան մինչև նոյեմբերի 30-ը |
| 1 | Հեղուկ լվացող միջոց | կգ | 50000 | 286 | 14300000 | 25000 | 25000 |

**Ծանոթություն՝** Մատակարարման վայրը՝ ք. Երևան, Սարմի 103 հասցեում:

**Հավելված N 2**
**№ ԳՀԱՊՁԲ-7/35-1 գնման պայմանագրի**
**№ 1 Փոփոխության**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքների պրանքի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ., ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Հեղուկ լվացող միջոց | 39831240/1/10/3 | 7150000 | 7150000 | 7150000 | 14300000 | 14300000 |

**Ծանոթություն՝** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-7/35-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 30-ը հոկտեմբերի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «Յունիքիմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Օհանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 07.08.2018թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-7/35-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Սույնով Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրին կից գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություններ, որոնք ներկայացված են սույն փոփոխությանը կից № 1 և № 2 Հավելվածներով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:
2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:
2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 7 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից Հավելված N 1,2 հանդիսանում են փոփոխության անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Յունիքիմ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Արտաշատի խճ. 11 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2050022417141001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02242529 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Վ. Օհանյան |

**Հավելված N 1**
**№ ԳՀԱՊՁԲ-7/35-1 գնման պայմանագրի**
**№ 1 Փոփոխության**

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/h | Գնման ենթակա ապրանքների պրանքի անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը 2018թ.-ին ըստ եռամսյակների, ընդ որում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան մինչև նոյեմբերի 30-ը |
| 1 | Հեղուկ լվացող միջոց | կգ | 50000 | 286 | 14300000 | 25000 | 25000 |

**Ծանոթություն՝** Մատակարարման վայրը՝ ք. Երևան, Սարմի 103 հասցեում:

**Հավելված N 2**
**№ ԳՀԱՊՁԲ-7/35-1 գնման պայմանագրի**
**№ 1 Փոփոխության**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/h | Գնման ենթակա ապրանքների պրանքի անվանումը | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ., ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Հեղուկ լվացող միջոց | 39831240/1/10/3 | 7150000 | 7150000 | 7150000 | 14300000 | 14300000 |

**Ծանոթություն՝** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | «Յունիքիմ» ՍՊԸ<br>տնօրեն |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Վ. Օհանյան |